

Գ. Հ. Ազնավուրյան

ԲԱՆԱՍՏԵՂԾ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՄԻ ԲԱՆԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Հովհաննիսյանի ժառանգության մի մասը, առավելապես չափածոն պահպանվել է Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում. հիմնականում հեղինակի ֆոնդում և մասամբ այլ հեղինակների արխիվային ֆոնդերում (նամակներ և այլն): Որոշ նյութեր գրտնրվում են Մատենադարանում, Պետական պատմական արխիվում, հարազատների մոտ և այլուր: Մնացածը պետք է որոնել պարբերական մամուլի էջերում ու լույս են տեսել մեծամասամբ անստորագիր և մասամբ ծածկանունի տակ:

Գրողի մահից հետո, նրա գրական ժառանգության հրատարակության բնագավառում և կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրելու ասպարեզում որոշ գրական աշխատանքներ կատարել են սովետահայ գրականագետներն ադատները: Մինչև այժմ լույս են տեսել վեց ժողովածուներ (1937, 1939, 1945, 1949, 1953 և 1959 թ.) և մի ուսումնասիրություն (1957):

Մեր դիտողությունները վերաբերում են Հ. Հովհաննիսյանի «Երկերի» մի հատորյակում (1959 թ.) ղեկավարած հոդվածներին (կազմող Ռ. Զարյան): Գրքի «Հոդվածներ» ենթաբաժնում 15 հոդվածներից 3-ը բանաստեղծի գրչին չեն պատկանում:

Այդ հոդվածները ժամանակագրական կարգով հետևյալներն են:

Առաջին՝ «Գրական նկատողություններ», որն առաջին անգամ լույս է տեսել Երևանում հրատարակվող «Պսակ» գրական-պատմական-մանկավարժական շաբաթաթերթի 1883 թվի № 4-ում Հովհաննես Հովհաննիսյան ստորագրությամբ (փակագծի մեջ ուսանող, Ս. Պետերբուրգ, 3 հունվարի):

Երկրորդը՝ «Նամակ Ս. Պետերբուրգից» խորագրով հոդվածն է, որն առաջին անգամ տպագրվել է «Մշակի» 1883 թ. № 148-ում, դարձյալ Հովհ. Հովհաննիսյանի ստորագրությամբ:

Իսկ երրորդը՝ առաջին անգամ հրատարակվել է Թիֆլիսի «Արձագանք»-ի 1897 թ. № 14-ում՝ Հովհաննես Հովհաննիսյան լրիվ ստորագրությամբ, առանց խորագրի («Արձագանքի անհայտացման մասին»), հոդվածի վերնագիրը դրվել է կազմողի կողմից (թեև կարելի էր մի այլ հարմար անուն տալ):

Այս երեք հոդվածները չեն պատկանում բանաստեղծին, այլ գրված են մի ուրիշ Հովհաննես Հովհաննիսյանի կողմից:

Ինչը առիթ տվեց մեզ կասկածելու, որ հիշյալ հոդվածների հեղինակը բանաստեղծը չէ: Առաջին և ամենաէական փաստն այն է, որ բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը իր ամբողջ կյանքի ընթացքում երբեք և ոչ մի անգամ չի նկել Պետերբուրգում. (ընդգծումը իմն է—Գ. Ա.), հետևաբար «Նամակ Ս. Պետերբուրգից» խորագրով թղթակցությունը չէր կարող ինքը գրել: Հոդվածի ըն

թերցումից երևում է, որ թղթակիցը ականատեսն ու մասնակիցն է Տուրգենևի մահվանն ու թաղմանը, Պետերբուրգում ընկերների հետ տարել է Տուրգենևի գերեզմանի վրա «Մշակի» կողմից դրվելիք պսակը (հավանորեն խմբագրության հանձնարարությամբ, լինելով «Մշակի» թղթակիցներից մեկը Պետերբուրգում), նկարագրել է թաղումը այնպիսի մանրամասնությամբ, որ կարող էր անել միմիայն ականատեսը:

Նույնը պիտի ասել «Գրական նկատողություններ» վերնագրով հոդվածի մասին, որը լույս է տեսել «Պսակի» 1883 թ. № 4-ում՝ Հովհաննես Հովհաննիսյան ստորագրությամբ, ստորագրությունից հետո փակագծի մեջ գրված է ուսանող, Ս. Պետերբուրգ: Վերջին բառը նշանակում է, որ հոդվածն ուղարկված է Պետերբուրգից, որ ուղարկողը նույնպես ուսանող է եղել (Այստեղ ի միջի այլոց նշենք, որ «Գրական նկատողություններ» խորագրով հոդվածը 1/3-ով կրթաձևով է հոդվածի հեղինակի նկատողությունները վերաբերում են ոչ միայն Տուրգենևից կատարված թարգմանությունների լեզվին, այլև խոսում է Պոռչյանի, Պատկանյանի և այլուր տեղ գտած գրվածքների լեզվի մասին): Այս առաջին փաստերը խոսում են հոգուտ Պետերբուրգում սովորող, ուսանող Հովհ. Հովհաննիսյանի օգտին և ոչ բանաստեղծի, որն այդ նույն ժամանակ սովորում էր Մոսկվայի Հազարյան ճեմարանում:

Որտեղից են գալիս այս երկու հոդվածները բանաստեղծին վերագրելու թյուրիմացությունը, գուցե ընկ. Ռուսեթ Հովհաննիսյանից, որն իր «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի զնահատմամբ» դոկտորական դիսերտացիոն աշխատության 1949 թ. հրատարակության մեջ, Տուրգենևի մասին հայ գրականության մեջ գրված հոդվածների շարքում տեղ է տվել նաև այդ նույն երկու հոդվածներին, վերցնելով այն մամուլից: Սակայն նա հեղինակի անուն-ազգանունը գրելով այնպես, ինչպես կա, չի շեշտել, թե դրանք բանաստեղծի գրչին են պատկանում, թեև այդպես էլ ընկալվել է թե ընկ. Ռ. Հովհաննիսյանի և թե ուրիշների կողմից: Այդ նույն սխալ փաստը ավելի աղավաղված ձևով տեղ է գտել նաև Հովհ. Պետրոսյանի կազմած «Հայ գրականության բիրտգրաֆիա»-ում: Հետագայում այդ նույն հոդվածները անվերապահորեն վերագրվել է բանաստեղծին և հրատարակվել նրա հոդվածների շարքում:

Երրորդ հոդվածը, որ տեղ է գտել նույն հատորում (էջ 304-306) կրում է «Արովյանի անհայտացման մասին» վերնագիրը: Այս հոդվածը նույնպես պատկանում է մյուս Հ. Հովհաննիսյանին, որն իրոք այդ տարիներին աշխատել է Երևանի նահանգապետի դիվանատանը, մոտ է եղել Արովյանի սիրած աշակերտներից մեկի՝ Շաֆի Բեգ Մուրսալիբեկովի հետ, վերջինս նույնպես աշխատել է այնտեղ: Հոդվածագիրը լսել է նրանից հետաքրքիր տեղեկություններ Արովյանի անձնավորության մասին, գրի է առել իր հիշատակարանում և երբեմն քրքրելով այն, որոշ նյութեր հանձնել ընթերցողների ուշադրությանը:

Եթե վերահիշյալ, ինչպես նաև հայ և ուր. պարբերական մամուլում ցրված այլ հոդվածների հեղինակը, Հովհաննես Հովհաննիսյան ստորագրությամբ, բանաստեղծը չէ, ապա ո՞վ է այդ հետաքրքիր անձնավորությունը, որն ապրած լինելով միևնույն ժամանակաշրջանում, բանաստեղծի հետ կողք-կողքի, երբեմն միևնույն քաղաքում (Քիֆիսում), շատ հաճախ աշխատակցելով միևնույն տարիներին նույն լրագրում («Մշակ» «Արձագանք» և այլն), շոշափել են գրական-մշակութային բնույթ կրող միևնույն խնդիրները:

Նկատի ունենալով, որ Գրականության և արվեստի թանգարանում, Մա-

տենադարանում և Պետական-պատմական արխիվում կան նաև մի շարք այլ փաստաթղթեր, նյութեր, մամուլում ցրված հոդվածներ, որոնք պատկանում են մյուս Հ. Հովհաննիսյանին և վտանգ կա, որ կարող են դարձյալ վերագրվել բանաստեղծին և մի նոր թյուրիմացության կամ սխալի առիթ տալ, ուստի մեր ձեռքի տակ եղած մի շարք տվյալների և արխիվային փաստաթղթերի հիման վրա առայժմ պարզել ենք հետևյալը:

Բանաստեղծի «Երկերի» մի հատորյակում զետեղված վերահիշյալ երեք և բացի այդ հայ և ռուս պարբերական մամուլում հրատարակված մի շարք այլ հետաքրքիր հոդվածների հեղինակը բնիկ երևանցի է, Հովհաննես Եզորի Հովհաննիսյան, ծնված 1856 թ. դեկտեմբերի 26-ին <Երևանում>: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, հավանորեն շարունակել է թեմական դպրանոցում, եղել է Խորեն Ստեփանի սիրված աշակերտներից մեկը (որին մի քանի նամակներ ունի գրած): 1870-ական թվականների վերջին, համալսարան ընդունվելու նպատակով գնացել է Պետերբուրգ, սակայն, ինչպես հայտնի է, թեմական դպրանոցի շրջանավարտներին թույլ չէր տրվում ընդունվելու համալսարան, երևի հենց այդ պատճառով մտել է Պետերբուրգի 6-րդ գիմնազիան, ավարտել է այն 1881 թ.: Այնուհետև ընդունվել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը. մեկ կամ երկու տարի անց, 1883 թ. ինչ-ինչ պատճառներով կամ անձնական նախասիրությունից դրդված, փոխադրվել է համալսարանի արևելագիտական ֆակուլտետի հայ-վրացական բաժինը, լսել է մի շարք հայագետ-արևելագետների, այդ թվում նաև պրոֆ. Բ. Պատկանյանին, որի դասախոսությունների մասին մի հետաքրքիր քննադատական հոդված ունի, տպված Թիֆլիսի «Մշակի» 1882 թ. № 212 (նոյեմբերի 16-ի) մեջ: Այդ հոդվածի ընթերցումից երևում է, որ նա հրաշալի իմացել է հայ գրականությունն ու կուլտուրան, նրա անցյալ պատմությունը և մշակույթային գործիչներին: Նա զայրույթով է արտահայտվել Պատկանյանի դասախոսությունների մասին, որոնց մեջ ժխտվել է հայ ժողովրդի մեծ մշակույթը: Այդ նույն ուսանողը դարձյալ «Մշակի» նույն թվի № 216-ի մեջ (նոյեմբերի 21) հանդես է եկել մի այլ ուշագրավ հոդվածով, Պետերբուրգի հայ ուսանողների գրական խմբակի և խմբակից դուրս մնացած ուսանողների գործունեության հարցի շուրջը: Հովհաննես Հովհաննիսյանը 1886 թ.՝ ուսման վարձը վճարել չկարողանալու պատճառով, ազատվել է համալսարանից և վերադարձել հայրենիք: Նա Պետերբուրգում սովորելու տարիներին, ինչպես երևում է իր հոդվածներից և նամակներից, կատարել է թարգմանություններ, թղթակցել է հայ և ռուս պարբերական մամուլին, գրելով գրականության, հայ և ռուս գրական կապերի և մշակույթային այլ հարցերի շուրջը:

Այդ նույն Հ. Հովհաննիսյանը հինգ տարի (1881—1886) սովորելով Պետերբուրգի համալսարանում, զինված գիտելիքներով և մտավոր մեծ պաշարով, վերադարձել է իր ծննդավայրը: Երևանում նա ընդունվել է նահանգապետի դիվանատունը, որպես գործերի կառավարչի օգնական:

Բարեբախտաբար այդ նույն Հ. Հովհաննիսյանից մեզ հասել են մի քանի նամակներ, ուղղված Խորեն Ստեփանեին, որից երկուսը գրականության և արվեստի թանգարանում են: Նամակներից մեկը խոսում է հոգուտ այն փաստի, որ իրոք ինքն այն անձնավորությունն է, որին վերագրում ենք «Նամակ Ս. Պետերբուրգից» և «Արովյանի անհայտացման մասին» հոդվածները:

Խոսենք փաստերի լեզվով: Մեր հիշատակած երկու ինքնագիր նամակնե-

րը պահպանվում են ԳԱԹ-ում, հորեն Ստեփաննի ֆոնդում: Նամակներից մեկն անթվակիր է, իսկ մյուսը գրված է 1889 թ. հուլիսի 29-ին Մաղկաձորից, ստորագրված է Լ. Հովհաննիսյան: Այս Լ. Հ.-ի և Բանաստեղծի ինքնագրերը և ստորագրությունները համեմատող յուրաքանչյուր ոք, նույնիսկ անփորձ աչքն անգամ կարող է նկատել և համոզվել, որ նրանց հեղինակները տարբեր անձնավորություններ են: Այս նամակից քաղվածաբար մեջ ենք բերում այն հատվածը, որը վերաբերում է իր պաշտոնավորությանը և Պետերբուրգում լինելու փաստին:

«Հարգելի հայրիկ, ես այժմ ամառանոցումն եմ, Մաղկաձորում, ամեն անգամ, անցնելով փլատակած վանքի կողմը, Ձեզ եմ մտաբերում հարգելի հայրիկ, և ինձ միշտ մեղադրում եմ՝ թե ինչու Ձեզ նամակ չեմ գրում. նամակ չգրելու պատճառն այս է. առաջինը ծուլություն, երկրորդը պարապմունք (ունեմ սլաշտոն помощник правления канцелярии Эриванского губернатора) (ընդգծումը իմն է—Գ. Ա.) և երրորդը ամենավատ հոգեկան տրամադրություն. այս հառաջացել է զանազան պատճառներից, գլխավորապես ինձ շրջապատող մարդկային լրբությունից, որն ավելի է, քան թե Պետերբուրգում. (ընդգծումներն իմն են—Գ. Ա.) սրտով ցավում եմ, աշխատում եմ ընդդիմանալ և խույլ չտալ, որ այդ լրբության թոզը իր շավիղները ինձ վրա շթողնի: Հավատացնում եմ Ձեզ, մի մարդ չկա, որի հետ կարելի լինի խոսելու զանազան հետաքրքիր առարկաների մասին. իմ միակ բարեկամները լրագրերն են, որոնք ինձ չեն կարող վնասել:

Ձեր խոնարհ ծառա՝ Լ. Հովհաննիսյան» և այլն:

Վերևում մեջ բերված նամակից մենք ընդգծեցինք երկու կարևոր փաստ, առաջին, որ այդ Լ.Հ.-ը եղել է Պետերբուրգում և երկրորդ՝ պաշտոնավարել է նահանգապետի դիվանատանը: Հետևաբար, «նամակ Ս. Պետերբուրգից» և «Արովյանի անհայտացման մասին» գրված հոդվածներն էլ, որ տեղ են գտել Բանաստեղծի 1959 թ. երկերի մի հատորյակում, պատկանում են այդ նույն Լ. Հ.-ի գրչին և ոչ Բանաստեղծին:

Մի լրացուցիչ փաստ ևս: Երբ գրվում էր վերոհիշյալ նամակը Մաղկաձորից, 1889 թ. հուլիսի 29-ին, Բանաստեղծ Լ. Հ.-ը ճանապարհորդում էր արտասահմանում և նույն թվի, նույն ամսի 29-ին մի հետաքրքիր նամակ է գրել Փարիզից-Մոսկվա իր մտերիմ ընկեր Մկ. Բարխուդարյանին և հաղորդել իր ճանապարհորդական տպավորությունների մասին:

Ահա այս նույն, երբեմնի դիվանատան պաշտոնյան և երբեմն այլ պաշտոններով աշխատող Լ. Հովհաննիսյանն է եղել, որ հաճախ հանդես է եկել պարբերական մամուլում, երբեմն Լ. Հովհաննիսյան (ուսանող), երբեմն լրիվ Հովհաննես Հովհաննիսյան և կամ էլ Հովհաննես Հովհաննիսյան, փակագծի մեջ (Ծրեանցի) ստորագրություններով:

Հարց է առաջ գալիս. ինչու է փակագծի մեջ ստորագրել նաև երեանցի: Պարզ է, որպեսզի տարբերվի Բանաստեղծ Լ. Հովհաննիսյանից, որն այդ ժամանակ (1892) արդեն գրական հայտնի դեմք էր, աշխատում էր Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցում, որպես ուսուցիչ, «Արձագանքի» մշտական և գլխավոր աշխատակիցներից մեկն էր, թեև միշտ աշխատակցում էր կամ ծածկանուններով և կամ էլ անստորագիր, սակայն երբեմն էլ հանդես էր գալիս նաև իր իս-

¹ Տե՛ս «Արձագանք», 1892, № 42, 44, «Ծրեանում հիմնվելիք գինեգործական դպրոցի մասին» խորագիրը կրող հոդվածը, որի տակ ստորագրել է Հովհաննես Հովհաննիսյան (Ծրեանցի):

կական ստորագրությամբ: Ուշագրավ է, որ Հ. Հովհաննիսյանը իր բոլոր բանաստեղծությունների տակ, բացառապես ստորագրել է իր անուն-ազգանունով, իսկ հոգվածների տակ՝ հազվագյուտ դեպքերում:

Այստեղ գուցե ավելորդ չլինի հիշատակել, որ երևանցի Հ. Հովհաննիսյանը բավական երկար ժամանակ (1890-ական թվերին, գուցե և ավելի շատ) ապրել և աշխատել է Թիֆլիսում մի նոր պաշտոնով—այդ առթիվ հորեն Ստեփանին ուղղված 1898 թ. մարտի 28-ի նամակում գրել է. «Ես այժմ Правитель дел Тифлисского Комитета Торговли и мануфактуры. Դա տերության կողմից հաստատված հասարակական հիմնարկություն է և գործում է տերության առաջ վաճառականների շահերը պաշտպանելով: Ստանում եմ 1500 մ. ռոճիկ» և այլն: Ապա հետևում է հետաքրքիր տեղեկություններ մի շարք անձանց՝ Մ. Եկմալյանի, Բժ. Նավասարդյանի և այլոց հետ ունեցած կապերի, մշակութային կյանքի, ընտանեկան-անձնական հարցերի և այլ խնդիրների մասին:

Բացի այդ, երևանցի Հ. Հովհաննիսյանը Թիֆլիսում 1890-ական թվերի սկզբին (1892—1893), գուցե և ավելի, վարել է նույնպիսի մի այլ ընտրովի պաշտոն: Նա եղել է հայ թատրոնական մասնաժողովի անդամ-քարտուղարը. աշխատել է այնպիսի հեղինակավոր անձանց հետ, ինչպիսիք էին նույն հանձնաժողովի անդամներ՝ Ալ. Երիցյանը, Մուրացանը, Ալ. Թարխանյանը, Մ. Արեղյանը, ինժեներ Յարալյանը, Բժ. Կ. Ստեփանյանը, Ամատունին և ուրիշներ: 1892 թ. հայ թատրոնական մասնաժողովի կողմից «Արձագանքի» խմբագրության ուղղված նամակի տակ (№ 105) ստորագրել է անդամ-քարտուղար մասնաժողովի Հովհ. Հովհաննիսյան՝ դարձյալ փակագծում (երևանցի):

Դժբախտաբար դեռևս չենք պարզել, թե իր կյանքի վերջին տարիներին ինչով է զբաղվել այդ գործիչը, որտեղ է ապրել, աշխատել, ի՞նչ վախճան է ունեցել և ե՞րբ է մահացել:

Այս հոգվածում բավականաչափ հանգամանորեն կանգ առանք երևանցի Հ. Հովհաննիսյանի թի անձնավորության և թե որոշ ժամանակաշրջանի գործունեության վրա այն պատճառով, որպեսզի պարզենք, թե ո՞վ է եղել բանաստեղծի անվանակիցը, որի հոգվածները վերագրվել են բանաստեղծին:

Մի քանի խոսք էլ բանաստեղծ՝ Հ. Հովհաննիսյանին վերագրվող «Մկրտիչ Պեշիկթաշլյան» խորագրով այն պատմա-քննադատական տեսության մասին, որը լույս է տեսել էջմիածնի «Արարատ» ամսագրի 1912 թ. № 1-ում (էջ 49—53) և 9-ում (էջ 840—857) Հ. Հ. ստորագրությամբ:

Առաջին անգամ այդ հոգվածը ուղադրության է առնվել զրաքննադատ՝ Գ. Հովսեփյանի կողմից՝ «Հովհաննես Հովհաննիսյան» (կյանքը և գործը) ուսումնասիրության մեջ (1957, էջ 77—80) և համարելով բանաստեղծի սեփականությունը, կանգ է առել այդ հոգվածի նշանակության վրա, ասելով, որ «գրականության պատմաբանի համար առանձին հետաքրքրություն է ներկայացնում Մկրտիչ Պեշիկթաշլյանին նվիրված ընդարձակ հոգվածը, ուր Հովհաննիսյանը դարձյալ ցուցաբերում է վերլուծության բարձր հմտություն և պատմական զգացողություն» (էջ 77) և այլն, և այլն:

Հիմք ընդունելով ընկ. Գ. Հովսեփյանի ուսումնասիրության մեջ այդ հոգվածը Հ. Հովհաննիսյանին վերագրելու փաստը, 1959 թ. հրատարակված ժողովածուի հոգվածների բաժնի ծանոթագրության մեջ գրվել է. «Հովհաննիսյանի շուրջ եղած գրականության մեջ հիշվում է նաև «Մկրտիչ Պեշիկթաշլյան» պատմաքննադատական տեսությունը, որ լույս է տեսել 1912 թ. «Արարատում»:

Այդ հոգվածը Հովհաննիսյանի գրչին է պատկանում, թե ոչ ուսումնասիրության կարոտ հարց է: Ծիշտ է, հոգվածը հրատարակվել է Հ. Հ. ստորագրությամբ, բայց խնդիրն այն է, որ «Արարատի» էջերում նույն ստորագրությամբ հանդես էր գալիս և մի այլ Հ. Հ.:

Հետաքրքիր հարցադրում է և արժե մի քանի խոսք էլ այդ մասին ասել:

Այս խնդրի կապակցությամբ որոշ պրպտումներ, որոշումներ կատարեցինք «Արարատի» մի շարք տարիների համարներում և պարզեցինք, որ Հ. Հ. (Յ. Յ.) ստորագրությամբ վերոհիշյալ հոգվածը չի պատկանում բանաստեղծ՝ Հ. Հովհաննիսյանի գրչին, այլ մի ուրիշ անձի, որը պետք է լինի Գևորգյան ճեմարանի նախկին շրջանավարտ, բարձրագույն կրթությունը Գերմանիայում ստացած, մեր ժամանակակից, Երևանի Պետական համալսարանի դասախոս, գրականագետ-երաժշտագետ՝ Հակոբ Հարությունյանը, որն այդ տարիներին պաշտոնապես համարվում էր «Արարատի» աշխատակիցը և որի աշխատակցելու մասին հիշատակում կա «Արարատում»: Հ. Հարությունյանը, հրաշալի գիտեր թե մայրենի լեզուն և թե գրականությունը, այնպես որ բոլորովին զարմանալի չէ, եթե այդ տեսությունը նրա գրչի արտադրանքը լինի:

Ինչ վերաբերում է Շուշուց 1907 թ. Հ. Հ. ստորագրությամբ ուղարկված մի ինչ-որ հոգվածի, որը դարձյալ որոշ ընկերներ կամենում են վերագրել բանաստեղծին, դարձյալ ճիշտ չէ, քանի որ բանաստեղծը Շուշում նույնպես չի լեզել: Գուցե այդ հոգվածը դարձյալ երևանցի Հ.Հ.-ի գրածը լինի, որը կարիք ունի ստուգման:

Հիշատակենք նաև մյուս հրատարակություններում եղած մի քանի այլ թերություններ մասին:

1937 թ. առաջին անգամ հրատարակվեց ընկ. Ռ. Ջարյանի կազմած Հ. Հովհաննիսյանի «Երկերի ժողովածու»-ի Ա հատորը (չափածոն), որի մեջ, ինչպես հայտնի է, տեղ են գտել լավականաչափ շեղումներ, թերություններ՝ բառերի սխալ ընթերցումներ, տեքստում բացթողումներ, ծանոթագրություններում բիրիկոգրաֆիայում սխալ նշումներ, բանաստեղծությունը կիսատ, թերի հրատարակելու փաստեր և այլն: Դրանք մեխանիկորեն անցել են նաև մյուս հրատարակություններին: Օրինակ, Հ. Հովհաննիսյանի արխիվում պահպանվում է 1880 թ. գրված մի ընդհանուր տետր, որի մեջ (ամփոփագրված) բանաստեղծությունների հերթանակությունն սկսվում է ոչ թե առաջին խորհրդային վերջից: Այսպիսով, եթե մի բանաստեղծությունը չի տեղավորվել տվյալ էջի վրա, շարունակությունն անցել է մյուս էջին: Դժբախտաբար կազմողի ուղարկությունից վրիպել է այդ և այդպիսի բանաստեղծությունն Երբեմն կիսվել է: Նույնը պատահել է «Առաջին սեր» խորագրով ոտանավորի հետ, որը հեղինակի մոտ յոթը քառատող է, իսկ 1937 թ. հրատարակության մեջ՝ երեք (էջ 238), մնացած չորսը մնացել է անտիպ: Այդ սխալների մի մասը կարող էին կանխվել, եթե հետազայում հրատարակության պատրաստող ընկերները դիմեին հեղինակի ձեռագրերին, որոնք պահվում են Գրականության և արվեստի թանգարանում:

Մենք այս խնդրին գուցե չանդրադառնայինք, եթե հրապարակի վրա չլիներ Հովհ. Հովհաննիսյանի գրական ժառանգության գիտական հրատարակության հարցը, որին ձեռնամուխ է եղել Մ. Արեղյանի անվան Գրականության և արվեստի թանգարանը: